



... ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՐԲԱԳԻՏՈՒԹԻՒՆ ...

**ՅԱՐԱՏԷՑԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆԸ**

Պարտեյ գործաւոր դարբինի մը որդի էր Կհորը հիւանդոտ վիճակն ղեռ աւելի կը սաստկացնէր իրենց թշուառութիւնը։ Խեղճ գործաւորը չէր բաներ և չբաւորութիւնը կարի պաշարած էր զինքը և իր ընտանիքը։ Երբ առողջութիւնը գտնելով՝ վերստին աշխատութիւնը կը սկսէր, տղան հանածուխի փողէն մրտաւժ՝ իր հօրը փուքին շղթան կը քաշէր, մտախոհ նայուածքով մը դիտելով միանգամայն այն կայծերն որոնք կը ցատկէին հրաշէկ երկաթէն, սակիւն վրայ ծեծուած ատեն։ Այդ չքաւոր պատանին որուն միշտ կը պակսէր երիտասարդական ախորժակին համեմատ իր օրապահիկ ուտեստը, օր մը իր հանճարին փայլովը պիտի բարձրանար աշխարհիս երեւելի մարդոց կարգը, պարտական ըլլալով մի միայն իր անձին, իր աշխատասիրութեան, իր արիւթեան և իր յարաստութեան։

Տաներեք տարեկան հասակին՝ գիտնալով կարգաւ, զրեւ և քիչ մը հաշիւ ընել, կազմարարի մը քով աշակերտ դրուեցաւ։ Զեռքը ինկաւ այն ատեն զբոյժի մը որ անոր մտքին վրայ տպաւորութիւն մը ընելու սահմանուած էր։ Ժողովրդային տարրագիտութեան ընթացք մ'էր ան, խիստ պարզ ոճով գրուած։ Փոքր կազմարարն անոր էջերը կը լսէր։ Նա անոր

մէջ կը գտնէր մի քանի իրողութեանց բացատրութիւնն, որոնց ինքը վկայ եղած էր, մտադիր՝ իր հայրենական հնոցին առջև։ Կապուտագոյն բոցի լեզուներ՝ որոնք հրակէզ ածուխի կտորէն կ'արձկուէին, կայծեր՝ որոնք հրախաղի մը շրեղութեամբ տխուր արուեստանոցը կը լեցնէին, հրաշէկ երկաթի սուր շաշիւն՝ ջուրի մէջ ընկղմուած պահուին։ Խթուածինը, կիզումը և թթուակացումը իր առջև հրաշալիքներու ասպարէզ մը կը պարզէին, որոնք աւելի ըմբռնելի դարձած էին իր դարբնոցի յուշերովը։

Բայց այդ յիշումներն բաւական չեղան ղեռ աւելի օգտակար կերպով հետեւելու զբոյժին բոլոր ըստածներուն։ Տղան տարբազէտ եղաւ։ Սակաւ առ սակաւ նա գործիքներ ճարեց, այսօր ապակեայ խողովակի կտորիկ մը՝ որ աշխատանոցին առաջին հարստութիւնը եղաւ, վաղը զնոգած շիշ մը, ուրիշ օր մը ապակեզանգի տեղ ծառայող՝ մեծկակ գաւաթ մը, դաշխուրան մը՝ տաշտի տեղ ծառայելու համար են։ Քանի մը հեղանիւթեր, որոնք համար երկիւզածօրէն կը ծախսէր իր շարթուան մէջ ըրած համեստ խնայողութիւնը, կը լրացնէին հետզհետէ իր գործիքի հաւաքածոյն։ Այն ժամանակ անմասն ձեռքի անսպաթաթութեամբ մը, փորձերու մեծ յաջողակութեամբ մը՝ օր մը առանց մրցակցի պիտի մնար, աշակերտն առանց որ և է ուսուցչի, առանց առաջնորդի,

առանց խորհրդակցի, բացի գրքէն, նա կը կրկնէր կէտ առ կէտ այն ամէն ինչ որ այն գիրքը կ'ըսէր: Կազմարարութեան բուրն իր ազատ ժամերն նուիրուած էին այդ մենակեաց կրթութեանը՝ որ ութ տարի տեկց:

Պարատէյ իր քսանամեայն անցուցեր էր երբ ընդունուեցաւ Տէվրի գիտնական



Պարատէյ

դասախօսութեանց ունկնդիր ըլլալու: Մէկը յանձնարարեց զինքը անուանի բնագէտին: « Ի՞նչ ընեմ այս երիտասարդ մարդը, պատասխանեց Տէվրի. իրեն պէտք չունիմ: Ապակեայ պատճենները լուսլու գործին դնեմ զինքը: Եթէ յաջողակութիւն մը ունի, սիրով պիտի կատարէ իր աշխատութիւնը, եթէ Հրաժարի անկէ, նշան է որ ոչ մէկ բանի պիտանի չէ նա»:

Երիտասարդը չմիտքեց զայն, և իրեն մեծ պատիւ սեպեց այնքան մեծանուն ուսուցչի մը՝ գիտական փորձանօթները լուսլու գործը: Տէվրի իր եռանդէն, իր հոգ-

ւոյն անբռնութենէն և իր սրտի պարզութենէն դրդուած՝ չկրցաւ ինքզինքը բռնել և ըսաւ անոր: « Լաւ մտածէ, կազմարարութիւնը և տուրևաբը թողնելէդ առաջ, լաւ խորհէ վրան: Եւ առաջուց կ'իմացընեմ քեզ, գիտութիւնը խստապահանջ է, տաժանելի և քիչ վեհանմն տիրուհի մը»:

Պարատէյ պինդ կեցաւ իր կարծեաց վրայ և երբէք այնպիսի տէր մը՝ չունեցաւ համաման պատրաստիչ մը իր հրամաններուն:

ՖԱՊՈՒ. Զեարդեհեր:

ԱՄԵՆԷՆ ԱՒԵԼԻ ՅՂԿԵԱՒ ԵՒ ՀԱՏՈՒ ՄԱՐՄՆՈՅ ԱՆՀԱՐ- ԹՈՒԹԻՒՆԸ

Խոշորացոյցին տակ դրէք ամենն և անկի սրածայր երեցող ասեղը, և պիտի տեսնէք անոր վրայ բուր, անհասար և անկանոն կէտ մը՝ որուն ձեւը կը նմանի ծայրը կոտրած սեպի մը:

Նոյնպէս է նաև ամենն անկի սրուած ամեկի մը բերանը, որուն եթէ խոշորացոյցով նայուի, նման է զմեկի մը կռնակին և տեղ տեղ իր վրայ կը ներկայացնէ ատամնաւ ձև կարուածներ սղոցի բերնի նման, բայց անկանոն կերպով:

Եթէ դիտուելու ըլլայ վերջապէս խոշորացոյցով մը, խնամքով յըդկուած ապակիի մը մակերևութիւնը, շատ զարմանք պիտի ազդէ մեզի այն տեսարանը՝ որ մեր առջև պիտի պարզուի, բոլորովին ակօսացեալ պիտի երևի ան և լի խորտուրտութիւններով, որոնք անկանոն կերպով կը ցրլացնեն լոյսը՝ գուռ նաւորելով զայն: Նոյն բանն է ամենաւ մեծ խնամքով յղկուած պողպատին համար ալ:

Արուեստը այս մասամբ շատ վար կը մնայ բնութենէն, վասն զի եթէ այս վերջինէն կերպով մը աշխատուած և յղկուած գործերն խոշորացոյցին ներկայացուին,